ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՎԱՐԴԵՆԻՍԻ ՇՈՒՐՋՕՐՅԱ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆ ՊՈԱԿ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 16 » 12 2024 թ. N 12-2

«ՎԱՐԴԵՆԻՍԻ ՇՈՒՐՋՕՐՅԱ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ

Ա/Ձ Վարդան Հովհաննիսյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառելու մասին

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Ա/Ձ Վարդան Հովհաննիսյանի միջև 29.12.2023թ-ին կնքված N «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/4-Վ-10» ծածկագրով «Վարդենիսի շուրջօրյա մասնագիտացված խնամքի կենտրոն» ՊՈԱԿ-ի 2024թ. կարիքների համար սննդամթերքի մատակարարման գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն վաճառողը պարտավորվում է գնորդին մատակարարել Պայմանագրի անբաժանելի մաս կազմող N1 և N2 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիրով և գնման - վճարման ժամանակացույցով նախատեսված ապրանքները: Սակայն Ա/Ձ Վարդան Հովհաննիսյանի կողմից սահմանված ժամկետում չի իրականացվել ապրանքի մատակարարում՝ խախտվելով պայմանագրով սահմանված վաճառողի պարտավորությունները, որի արդյունքում 05.12.2024թ-ին գնորդը միակողմանի մասնակի լուծել է պայմանագիրը՝ այն համարելով լուծված 435370.788 (չորս հարյուր երեսունհինգ հազար երեք հարյուր յոթանասուն դրամ) ՀՀ դրամ, յոթ հարյուր ութանասունութ լումա չափով:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կիրառելով ՀՀ կառավարության 2017թ մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները 05.12.2024թ Ա/Ձ Վարդան Հովհաննիսյանին ուղարկվել է համապատասխան ծանուցում և տրվել է 5 օրացուցային օր՝ տուժանքով սահմանված պայմանագրի ապահովման 52773 /հիսուներկու հազար յոթ հարյուր յոթանասուներեք/ ՀՀ դրամ և որակավորման ապահովման 79159.50 /յոթանասունինը հազար հարյուր հիսունինը/ ՀՀ դրամ, հիսուն լումա գումարները Շահառուի 900008000664 հաշվեհամարին փոխանցելու համար, սակայն սահմանված ժամկետում Ա/Ձ Վարդան Հովհաննիսյանի կողմից չի վճարվել պայմանագրի ապահովման և որակավորման ապահովման գումարը:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությամբ

ՈՐՈՇԵՑԻ

1. Ա/Ձ Վարդան Հովհաննիսյանի տվյալները համապատասխան հիմքերով ներկայացնել ՀՀ Ֆինանսների նախարարություն՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՏՆՕՐԵՆ՝ Ռ. ԽԼՈՅԱՆ